

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման իններորդ (07.02.2011թ.-26.05.2011թ.) և 21.06.2011թ. գումարված արտահերթ նստաշրջանների արդյունքների մասին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման իններորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 6 քառօրյա և ՀՀ կառավարության նախաձեռնությամբ՝ մեկ արտահերթ նիստ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 141 հարց, որից 71-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին, 57-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը (1-ը՝ ԱԺ-ի որոշման նախագիծ), 2-ը՝ ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների համատեղ օրենքի նախագիծ, 11-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր (1-ը՝ ՀՀ նախագահի առարկություններով և առաջարկություններով վերադարձված օրենքի նախագիծ):

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 73 հարցով, որից 40-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին (1-ը՝ ԱԺ որոշման նախագիծ), 20-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը (1-ը՝ ԱԺ որոշման նախագիծ), 13-ը՝ պարտադիր եւ ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 214 հարցերից 186-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից գարնանային նստաշրջանի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 67-ը (44-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին. 7-ը ՀՀ կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի, 23-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը):

Ամբողջությամբ ընդունված 67 օրենքներից 6-ը «մայր» օրենքներ էին՝ 5-ը ՀՀ կառավարության նախաձեռնությունները, 1-ը՝ ԱԺ պատգամավորներինը, իսկ 62-ը՝ գործող օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին:

Նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը՝

ա) լսեց

-Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2009 թվականի գործունեության մասին հաղորդումը,

-Հանրային հեռուստառադիոընկերության 2009 թվականի գործունեության վերաբերյալ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հաղորդումը,

-ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը <<2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության և ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջարկությունների կատարման ընթացքի մշտադիտարկման (մոնիթորինգի) վերաբերյալ>>:

բ) քննարկեց

-Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2010 թվականի տարեկան հաշվետվությունը,

-2011 թվականի ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիրը,

-2010 թվականի ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը

-Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի գործունեության ծրագիրը,

-Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2010 թվականի տարեկան գործունեության ծրագիրը,

-Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի տարեկան գործունեության ծրագիրը,

-<<ՀՅԴ>> խմբակցության հարցապնդումը:

զ) ընդունեց

- որոշում՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին:
- մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի *հրաժարականը*:

դ) ընտրեց

-Կարեն Անդրեասյանին՝ մարդու իրավունքների պաշտպան:

ե) հաստատեց

- Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը,
- Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման 2009 թվականի տարեկան հաշվետվությունը:

Նստաշրջանի ընթացքում դադարեցվեց ՀՀ ԱԺ պատգամավոր Արծրունի Աղաջանյանի լիազորությունները՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ: Ա. Աղաջանյանի փոխարեն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ՕԵԿ-ի ցուցակից պատգամավոր գրանցեց Մարգարետունի Մանուկյանին:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեց 19 միջազգային պայմանագիր, որոնցից 11-ը ֆինանսատնտեսական, 2-ը՝ պաշտպանության, 1-ը՝ իրավական օգնության, 1-ը՝ մաքսային բնագավառներում համագործակցության մասին էին եւ այլն:

ՀՀ Ազգային ժողովը քվեարկությամբ մերժեց՝

1) ՀՀ ԱԺ պատգամավորներ Ստյոպա Սաֆարյանի, Բաֆֆի Հովհաննիսյանի, Անահիտ Բախշյանի, Լարիսա Ալավերդյանի, Արմեն Մարտիրոսյանի և Զարուհի Փոստանջյանի «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-1045) ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ ԱԺ-ի չորրորդ գումարման իններորդ նստաշրջանի օրակարգ ընդգրկելու մասին հարցը:

2) ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ներկայացված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրան կից ներկայացված օրինագծերը 3-րդ ընթերցմամբ ընդունելու մասին հարցը, որը սակայն հետո կրկին ներկայացվեց ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը և ընդունվեց երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:

3) «ՀՅԴ» խմբակցության կողմից արտահերթ համարված «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրինագիծը:

Նստաշրջանի ընթացքում 40 պատգամավոր գրավոր և 48 պատգամավոր բանավոր հարցերով դիմել են ՀՀ կառավարությանը: «ՕԵԿ» և «ՀՅԴ» խմբակցությունները մեկական հարցապնդումով դիմել էին ՀՀ կառավարությանը, 108 պատգամավոր հանդես են եկել հայտարարությամբ, որից 33-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման իններորդ նստաշրջանի ավարտից հետո ՀՀ կառավարության նախաձեռնությամբ գումարվեց ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան:

Նստաշրջանի ընթացքում քննարկվեց 24 հարց, որից 19-ը ՀՀ օրենքների նախագծեր էին, 5-ը՝ միջազգային պայմանագրեր:

Բոլոր օրինագծերը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին: Օրինագծերից 17-ը քննարկվեցին և ընդունվեցին ամբողջությամբ (2-ը մայր օրենքներ էին), 2-ը՝ 1-ին ընթերցմամբ: